գրեցաք, առաջի եդին հրովարտակս 3, և Հէօճմէթս 8։ վասն փակեալ դրան Լատինաց՝ հրովարտակս 2, և Հէօճմէթ 1։ վասն Համբարձման տեղւոյն չինութեան, հրովարտակս հին և նոր 5, և Հէօճմէթս հին 3։ վասն Գողգոթայի՝ բաց 'ի դաշնագրոց՝ հրովարտակս 3 'ի Սուլթանաց Եգիպտոսի, մին թերի, և Հէօճմէթս 2։ վասն Քառասնից այրին՝ Հէօճմէթ 1։ վասն վանաց Յովհաննու Ծընընդեան՝ հրովարտակս 2 'ի Սուլթանացն Եգիպտոսի։ Իսկ վասն Մարոյ տեղւոյն ասեն թէ՝ այն էր սեփհականութիւն Հայոց՝ և գտեալ պատեհ ժամանակ հնարիւք յափշտակեցին զայն Լատինք։ խորտակեցին զարկեղունս և զդարանս յԱյրի անդ, և յափշտակեցին զոր միանգամ գտին 'ի նոսա, բարձին անտի և զկանթեղունս Հայոց, այժմ պահանջեմք զիրաւունս մեր, եւ վասն այնր ունիմք հրովարտակ 'ի Սուլթան Մուսդաֆայէ՝ և Հէօճմէթս 2։ Զայսոսիկ վաւերական գրեանս զորս մատուցին Հայք, զոմանց խմաստս, և զոմանս բառ առ բառ օրինակեցին յօրագրի անդ։ փակեցաւ Ատեանն։

Այլ մինչդեռ տակաւին 'ի Կոստանդինուպոլիս էր Կիրակոս Եպիսկոպոս, կոչեցին զնա 'ի Նոր Խան 'ի սենեակ Յովհաննէս աղայի, որ էր քուերորդի Բիշմիշեանի, ուր ժողովեալ էին միայն Քեահեայ Ճանիկ, Բիշմիշեան Միքայէլ, և Երկանեան Յարութիւն Ամիրայք։ եւ յառանձնութեան անդ տեսին զՀաշեոյ տումար ելից և մտից Սուրբ Աթոռոյն, զոր առաքեալ էր Պօղոս Եպիսկոպոս՝ և բարւոք գիտողութեամբ 'ի նկատի առեալ վերահասու եղեն ամենայնի, ուրախ եղեն յոյժ եւ գովեցին զխոհական կառավարութիւն նորին։ Ապա հարցին ցԿիրակոս Եպիսկոպոս՝ թէ յի՞նչ միտս են գլխաւորք միաբանաց և զի՞նչ կամին առնել զյաւելեալ գումարն։ Եւ նա արար պատասխանի՝ յաջողութեամբ Տեառն յաւուրս ձեր Ջանիւք նորին Սրբազնութեան աղատեցաւ Աթոռն 'ի պարտուց՝ եւ յաւելաւ ինչ՝ այլ այսպիսի աւուրք յաջողութեան ոչ մնան միշտ։ գուցէ 'ի պատահիլ պատերազմաց և այլ ձախորդութեանց, նուազեսցի թիւ ուխտաւորաց՝ յայնժամ հարկ լինի 'ի նեղութեան պահու ձեռն արկանել յայն գումար։ Եւ յայսոսիկ երկուս ամս բազում տեղիք չինեցան յերու-